

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ամեն. Տ. եղիշէ Արք. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Ս. Ք ա ղ ա ք

Ամեն. Սրբազան Հայր

Տիար Ա. Մանուկեան նախ քան քաղաքէս մեկնիլը փափաքեցաւ որ հրաշափառ Ս. Յարութեան տօնին առթիւ յանուն Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի, աշխարհացրիւ անդամակցութեան, Տիկին Մանուկեանի եւ իր որդիական սրտաբոխ շնորհատրութիւնները և բարեմաղթութիւնները փոխանցեմ Ձերդ Սրբազնութեան արեւշատութեան ու Հայց. Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ պայծառութեան համար:

Քրիստոնէայ աշխարհին այս մեծագոյն տօնը յաւիտեանական կեանքի Մեծ հոստումին խորհուրդն է որ ուսուցեր է մեզի Հայց. Առաք. Մայր Եկեղեցին: Թող սիրոյ ու խաղաղութեան լոյսը ծագի Փրկչի գերեզմանէն:

Կը միանամք բարի կամեցողութեան տէր բոլոր մարդոց մաղթելու որ Ս. Զատկի հոգեւոր ցնծութիւնը Հայ Ազգին պարգեւէ տեւական, խաղաղ ու լուսառատ օրեր:

Հայցելով ձեր օրհնութիւնները՝ կը մատչեմք ի համբոյր ձերդ Սրբազնութեան Ս. Աշոյն,

Մնամ խորին յարգանքներով

Զ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Մարտ 25, 1972

Տիբրոյթ, Միշիկան